| 3 | Բարեգործը                               | <ol style="list-style-type: none"> <li>1. «Վորլդ Վիժն» Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ<br/>հասցե՝ World Vision UK Opal Drive, Fox Milne, Milton Keynes, MK15 0ZR, UK</li> <li>2. «Վորլդ Վիժն» ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ<br/>հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001</li> <li>3. «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի աջակցող գրասենյակ<br/>հասցե՝ World Vision Switzerland, Kriesbachstrasse 30, CH-8600 Duebendorf, Switzerland</li> <li>4. «Վորլդ Վիժն» Ֆրանսիայի աջակցող գրասենյակ<br/>հասցե՝ 7 rue Pasquier - 75008 Paris, France</li> <li>5. «Վորլդ Վիժն» Գերմանիայի աջակցող գրասենյակ<br/>հասցե՝ World Vision Deutschland e.V. Am Houllier Platz 4 61381 Friedrichsdorf</li> <li>6. «Վորլդ Վիժն» Թայվանի աջակցող գրասենյակ<br/>հասցե՝ 6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan</li> <li>7. «Վորլդ Վիժն» Կանադայի աջակցող գրասենյակ<br/>հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada</li> </ol> |
| 4 | Ծրագիրը կատարողը                        | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ Երևան, Դ. Մելիքյան փ. 1, ՀՀ 222՝ 02528755, հեռախոս՝ +37460491010                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը    | Իրականացման վայրն է հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Չարգացման                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |

1/2

|    |                                                                                    |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
|----|------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|    |                                                                                    | Ծրագրերում ընդգրկված 209 համայնքները (համայնքների ցանկը կցվում է):<br>Ծրագրի բնագավառը՝ սոցիալական:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |
| 6  | Ծրագրի բյուջեն                                                                     | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 3,168,415 (երեք միլիոն մեկ հարյուր վաթսուևութ հազար չորս հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |
| 7  | Բարեգործություն ստացողը                                                            | Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Չարգացման Ծրագրերում ընդգրկված 209 համայնքներում բնակվող 34,800 երեխաները:<br>Երեխաների տվյալների հավաքագրման ժամանակ կնքվում է երկկողմանի համաձայնագիր, որը հաստատում է տվյալ երեխայի ծնողի համաձայնությունը՝ երեխաներին «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից տվյալ համայնքում իրականացվող ծրագրերում ընդգրկելու մասին:                                                                                                                                                                                                                                                         |
| 8  | Ծրագրի իրականացման տևողությունը                                                    | 22 ապրիլի 2016թ. – 30 հունիսի 2016թ.                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            |
| 9  | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2016թ. ապրիլի 22-ից մինչև 2016թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում նամակագրական նյութեր տպագրել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երեխաների հովանավորության ծրագրի համար:<br>Տպագրական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 3,168,415 (երեք միլիոն մեկ հարյուր վաթսուևութ հազար չորս հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:<br>Նամակագրության թաղանթությունը իրականացվում է Երեխաների հովանավորության ծրագրի աշխատակիցների կողմից:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |
| 10 | Երեխաների հովանավորության ծրագրի նպատակը                                           | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երեխաների հովանավորության ծրագրի աշխատանքներն ապահովելու համար տպագրվելու են նամակագրական նյութեր: Բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է երկու խիստ: «Ասողիկ» ՍՊԸ-ն իրականացնելու է ներածական նամակների, «Իմ հովանավորին» նամակների բլանկերի և նամակների տպագրական աշխատանքները, իսկ «Անտարես» ՍՊԸ-ն իրականացնելու է բուկլետների տպագրական աշխատանքները:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,168,415 (երեք միլիոն մեկ հարյուր վաթսուևութ հազար չորս հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, որից 2,278,415 (երկու միլիոն երկու հարյուր յոթանասուևութ հազար չորս հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ արժեքով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «Անտարես» ՍՊԸ-ի կողմից, իսկ 890,000 (ութ հարյուր ինսուս հազար) ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «Ասողիկ» ՍՊԸ-ի կողմից: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը                                | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |



1/2




|    |                                                                                      |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |
|----|--------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղական և քաղաքային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև 209 համայնքներում գործող դպրոցների և մանկապարտեզների հետ:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը       | Ծրագրի անմիջական վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Միսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային ջարդացման Ծրագրերի գրասենյակների աշխատակիցների կողմից, ինչպես նաև Հոլանդական բաժնի մասնագետների կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային փողոցի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի կողմից և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի նախարարին նախնաժողով: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Հոլանդական բաժնի գլխավոր

Մադլեն Մուրադյան

K. Muradyan



1/1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**10 հունիսի 2016 թվականի N Մ- 465 -Ա**  
**քաղ. երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻՃԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՎԵՐՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ ԱՆՀԱՏ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԻՑ»  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մայիսի 31-ի N 07/80-2/15296-16 և հունիսի 9-ի N 07/80-2/16097-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի մայիսի 31-ի N 02/14/6599-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի մայիսի 30-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/6599-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մայիսի 27-ի N 06/3-4/16453-16 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիճն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 50,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Երեխաների հովանավորության ծրագրի շրջանակներում նվերների փաթեթներ անհատ հովանավորներից» ծրագիրը (կցվում է):


2. «Վորլդ Վիճն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի

պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ա. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

## Ծրագիր

 $\frac{7}{2}$  $\frac{1}{2}$

|    |                                                                                |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
|----|--------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | <p>Ծրագրի անմիջական վերահսկողությունն իրականացվում է «Արլոլ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբեյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Ջարգացման Ծրագրերի գրասենյակների աշխատակիցների կողմից, ինչպես նաև Հովանավորության բաժնի մասնագետների կողմից:</p> <p>«Արլոլ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից:</p> <p>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:</p> |
|----|--------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

«Արլոլ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Հովանավորության բաժնի նախագահ

Մադլեն Մուրադյան




7/2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**


**10 հունիսի 2016 թվականի N Մ- 466 -Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ  
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մայիսի 27-ի N 07/80-2/15139-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի 1-ի N 06/3-4/16836-16 եզրակացությունները, որոշում է.*

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության “Нахичеванская-на-Дону Армянская община” հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված փայտի և մալուխի (21,209 կգ ընդհանուր քաշով, 246,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունիսի 2016 թվականի N Մ- 467 -Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ  
ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մայիսի 31-ի N 07/80-2/15293-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի մայիսի 31-ի N ԱՄ/22.2/5741-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի 3-ի N 06/3-4/17125-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության “Нахичеванская-на-Дону Армянская община” հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված 3 հատ շտապօգնության մեքենայի, մեկ հատ ՈԱՀ 315195-067 մեքենայի և բժշկական սարքավորումների լրակազմի (մեքենաների նույնականացման համարները՝ X891806MA60FB3001, X891806MA60FB3002, X891806MA60FB3003, XTT315195G1001020, 10,495 կգ ընդհանուր քաշով, 4,965,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**10 հունիսի 2016 թվականի N Մ- 468 -Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ  
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 2**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մայիսի 31-ի N 07/80-2/15294-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի 3-ի N 06/3-4/17127-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վլադիմիր Գեորգիի Ավագյանի (անձնագիր՝ N 72 4846802, տրված՝ 07.06.2013թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված շինարարական և այլ ապրանքները (20,996.44 կգ ընդհանուր քաշով, 1,912,924.93 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**


**Ո Ր Շ ՈՒ Մ**  
**10 հունիսի 2016 թվականի N Մ- 469 -Ա**  
**քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԿՐՏԻՉ ԱՅՎԱԶՅԱՆԻ  
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մայիսի 27-ի N 07/80-2/15092-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի 1-ի N 06/3-4/16838-16 եզրակացությունները, **ո Ր Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել շվեյցարացի անհատ բարերար Շտեֆան Շայյուլերի (անձնագիր՝ N F2628590, տրված՝ 07.06.2006թ.) կողմից Հայաստանի Հանրապետության Մկրտիչ Այվազյանի (անձնագիր՝ N AN0577732, տրված՝ 23.07.2013թ.) հասցեով ստացված բեռի (2 պալետ, 511 կգ ընդհանուր քաշով, 8,088 շվեյցարական ֆրանկ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,120 եվրո, ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:




Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բարեգործական ապրանքների ցանկ

7/4.11

|                        |                                | քանակ | գին<br>(CHF) | արժեք<br>(CHF) | 20%<br>գեղճ | ընդամենը<br>(CHF) |
|------------------------|--------------------------------|-------|--------------|----------------|-------------|-------------------|
| Արշավային կոշիկներ     | трекинговые ботинки            | 110   | 49.00        | 5,390          | 1,078       | 4,312             |
| Անձրևանոց              | дождевик                       | 100   | 19.00        | 1,900          | 380         | 1,520             |
| Ծալվող բահ             | складная лопата                | 100   | 12.00        | 1,200          | 240         | 960               |
| Քնելու պարկ            | Спальный мешок                 | 30    | 49.00        | 1,470          | 294         | 1,176             |
| Ջրի տեղափոխման<br>պարկ | мешок<br>распределения<br>воды | 10    | 15.00        | 150            | 30          | 120               |
|                        |                                |       |              | 10,110         | 2,022       | 8,088             |







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**10 հունիսի 2016 թվականի N Մ - 470 - Ա**

**քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մայիսի 27-ի N 07/80-2/15143-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի մայիսի 30-ի N ԱՄ/22.2/5697-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մայիսի 27-ի N 06/3-4/16424-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Շվեյցարիայի ՍԵՄՌԱ Պլյուս հիմնադրամի կողմից «Սիլագ Ինտերնեյշնլ» ընկերության միջոցով «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված Էպրեքս դեղամիջոցը (1,764 կգ ընդհանուր քաշով, 56,076.52 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 11,764.60 շվեյցարական ֆրանկ, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽՆ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**


**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**10 հունիսի 2016 թվականի N Մ - 471 - Ա**  
**քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մայիսի 27-ի N 07/80-2/15149-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի մայիսի 26-ի N 06/3-4/16361-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից Ռուսաստանի Դաշնությունում ձեռք բերված բեռը (205 տեղ, 5,550 կգ քաշով, 4,296,580 ռուսական ռուբլու համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ցանկը կցվում է) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



**Ա. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ**

**ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ**


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Բարեգործական հիմնադրամի կողմից մատակարար Ռայսպեր Մարիա Միխաիլովնա -ից (ՀՎՀՀ՝ 753603519145, Մոսկվայի շրջան, ք. Կրասնոգորսկ, Մոլոդյոժնայա փ. 2) ձեռք են բերվել և ՀՀ տարածք են ներմուծվել ստորև ներկայացված ապրանքները՝

| Ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ)                                                                                                                                                                                                                                | Քանակ | Միավոր | Գումար(Ռուբլի) |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------|--------|----------------|
| Պոլիստիրոլ սև                                                                                                                                                                                                                                                           | 60    | Հատ    | 267 400        |
| Oraca1641/072M,<br>Կտրող, արտապատկերող սարք                                                                                                                                                                                                                             | 4     | Հատ    | 40 440         |
| Մետաղյա շրջանակ, ներկված,<br>պլաստիկով համալրված                                                                                                                                                                                                                        | 2     | Հատ    | 82 800         |
| Շրջանակ փայտանյութից, մետաղյա<br>շրջանակ, երեսպատում՝ СПК,<br>նրբատախտակ, պոլիստիրոլ<br>կաթնագույն, պոլիստիրոլ<br>կաթնագույն, պոլիստիրոլ                                                                                                                                | 2     | Հատ    | 275 840        |
| Մետաղյա շրջանակ զոդվող,<br>շառավղային ճնշումադիմացկուն,<br>ձեւավորում, պոլիստիրոլ սեւ, ,<br>համալրված կաթնագույն բջիջավոր<br>պլաստիկով                                                                                                                                  | 1     | Հատ    | 387 320        |
| Մետաղյա շրջանակ զոդվող,<br>ճնշումադիմացկուն, Մետաղյա<br>շրջանակ զոդվող, շառավղային<br>ճնշումադիմացկուն, ձեւավորում,<br>պոլիստիրոլ սեւ, , համալրված<br>կաթնագույն բջիջավոր պլաստիկով<br>սեւ, համալրված կաթնագույն<br>բջիջավոր պլաստիկով կաթնագույն<br>բջիջավոր պլաստիկով | 1     | Հատ    | 136 400        |



Initiatives for Development of Armenia  
Հայաստանի Չարգացման Նախաձեռնություններ


|                                                                                                                         |    |         |         |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|---------|---------|
| Փայտակույթից շրջանակ/<br>նորաստանում                                                                                    | 1  | Հատ     | 18 000  |
| Մետաղյա շրջանակ, գողվող<br>Երեսպատումը պոլիստիրոլ<br>համապատասխանում է ձևապատկերին                                      | 6  | Հատ     | 430 488 |
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>Երեսպատումը պոլիվինիլքլորիդային<br>պլաստիկ (ՊՎՔ) համալրված                                  | 3  | Հատ     | 142 164 |
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>Երեսպատումը պոլիվինիլքլորիդային<br>պլաստիկ (ՊՎՔ) համալրված<br>անկյունային շրջանակներով      | 2  | Հատ     | 111 644 |
| Մետաղյա շրջանակ, գողվող, սև<br>գործվածք, համալրված անկյունային                                                          | 2  | Հատ     | 36 400  |
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>համալրված անկյունային<br>շրջանակներով, արգելափակող<br>պաստառ, լիպոլայն տպագրություն         | 2  | Հատ     | 173 260 |
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>Երեսպատումը պաստառ,<br>համալրված անկյունային<br>շրջանակներով                                | 1  | Հատ     | 44 000  |
| Շրջանակ պոլիվինիլքլորիդային<br>պլաստիկ (ՊՎՔ), կաթնագույն,<br>լիպոլայն տպագրություն, RGB                                 | 1  | Հատ     | 64 400  |
| Գորգածածկույթ սև, Ֆուրնիտուրա                                                                                           | 3  | Հատ     | 30 000  |
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>Երեսպատված տառերով<br>պոլիվինիլքլորիդային պլաստիկից<br>(ՊՎՔ), լիպոլայն տպագրություն         | 1  | Հատ     | 67 000  |
| Մետաղյա պրոֆիլ 40x20մմ,<br>համալրված, Լայնացուցիչներով                                                                  | 80 | գծամետր | 32 000  |
| Դարսավոր ծալքերով կարված<br>գործվածք՝ համալրված խոյակով,<br>պոլիվինիլքլորիդային պլաստիկ<br>(ՊՎՔ), լիպոլայն տպագրություն | 4  | Հատ     | 77 200  |
| Պոլիստիրոլ արծաթագույն,<br>մեքենայով կտրած                                                                              | 8  | թերթ    | 46 800  |



|                                                                                                                                   |    |     |         |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|-----|---------|
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>համալրված անկյունային<br>շրջանակներով եւ պաստառով                                                     | 8  | Հատ | 349 696 |
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>համալրված անկյունային<br>շրջանակներով եւ պաստառով                                                     | 8  | Հատ | 354 480 |
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>համալրված անկյունային<br>շրջանակներով եւ պաստառով                                                     | 2  | Հատ | 41 116  |
| Շրջանակ ՄՓՄ, Պոլիստիրոլ                                                                                                           | 2  | Հատ | 73 600  |
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>համալրված անկյունային<br>շրջանակներով եւ պաստառով                                                     | 1  | Հատ | 106 952 |
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>պոլիվինիլքլորիդային պլաստիկ<br>(ՊՎՔ), լիպոլայն տպագրություն,<br>համալրված անկյունային<br>շրջանակներով | 1  | Հատ | 84 490  |
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>համալրված անկյունային<br>շրջանակներով եւ պաստառով                                                     | 5  | Հատ | 401 540 |
| պաստառ/գործվածք, լիպոլայն<br>տպագրություն Համալրված<br>մոնտաժային պրոֆիլով                                                        | 10 | Հատ | 41 400  |
| Մետաղյա շրջանակ, գողվող,<br>պոլիվինիլքլորիդային պլաստիկ<br>(ՊՎՔ), լիպոլայն տպագրություն,<br>համալրված անկյունային<br>շրջանակներով | 1  | Հատ | 115 670 |
| Շրջանակ, պոլիվինիլքլորիդային<br>պլաստիկ (ՊՎՔ), Oracal                                                                             | 6  | Հատ | 40 080  |
| Գորգածածկույթ մոխրագույն<br>Ֆուրնիտուրա                                                                                           | 2  | Հատ | 8 000   |
| Մետաղյա շրջանակ, երեսպատումը<br>ակրիլային ապակի, ՊՎՔ,<br>ստանդարտ սանիտար, սնամեղ                                                 | 2  | Հատ | 50 000  |



|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |   |        |                  |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|--------|------------------|
| Անվտանգության ճոպան 200մ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      | 2 | կապոց  | 20 000           |
| ՄՓՍ, գորգածածկույթ սեւ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | 2 | Հատ    | 26 000           |
| Պտուտակաձիգ 4 հատ, շաղափիչ 2 հատ, ոռոգրահատ սղոց 2 հատ, կարիչ 15 հատ, մանրահատակի սղոց 1 հատ, ձեռքի սղոց 2 հատ, մուրձ 2 հատ, տափաշուրթ 2 հատ, էլեկտրական վարսահարդար 1 հատ, երկարացման լար 3 հատ, աստիճան 2 հատ, ձգող օղակներ 20 տուփ, ճոպանների ամրացման լար 1000 գծամետր, ձեռնոցներ 30 զույգ, սոսինձ cosmofen 10 հատ, անվտանգության ճոպան 300 գծամետր, թուղթ կտրելու դանակ 30 հատ, մետաղյա երկր 3 հավաքածու | 2 | Սնդուկ | 120 000          |
| <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՆՈՒՄ</b>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |   |        | <b>4 296 580</b> |





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**10 հունիսի 2016 թվականի N Մ - 472 - Ա**

**քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ  
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մայիսի 24-ի N 07/80-2/14899-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի մայիսի 23-ի N 06/3-4/15736-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա և 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սի Ի Թի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00137791) 2016 թվականի մայիսի 11-ին կնքված N 110516\_4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապրանքների ձեռքբերում՝ 1,922,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**10 հունիսի 2016 թվականի N Մ - 473 - Ա**

**քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ  
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի մայիսի 24-ի N 07/80-2/14881-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտեի 2016 թվականի մայիսի 23-ի N 06/3-4/15737-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

